600.0313.09.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2020 թվականի №313Ա

քաղ. Երևան

«ԹԻՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 100 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 10-ի №242Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր «ՎԵՈՆ» ընկերությունների խմբում ընդգրկված «Վիմպել-Կոմունիկացիի» հանրային բաժնետիրական ընկերությանը պատկանող 100 տոկոս բաժնետոմսերը «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ՝ Ընկերություն) օտարելուն,

բ) որ Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 29-ի №258Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո Ընկերության կողմից «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն,

գ) որ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 26-ի №286Ա որոշմամբ համաձայնություն է տրվել Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնեմասերը «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն,

դ) որ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №296Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո Ընկերության կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն,

ե) Ընկերության 2020 թվականի օգոստոսի 21-ի №14/20 և օգոստոսի 25-ի №15/20 գրությունները, որոնցով վերջինս հայտնել է, որ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետոմսերի գրավադրման գործընթացի շրջանակում ինչպես Ընկերության և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության, այնպես էլ Ընկերության և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև վարկային պայմանագրերով դրանք վերադարձնելու Ընկերության պարտավորությունների կատարումն ապահովվում է նաև Ընկերության 100 տոկոս բաժնեմասերի գրավով և, կախված նշված բաժնետոմսերի ձեռքբերման գործարքի ֆինանսավորման վերջնական կառուցվածքից, Ընկերության բաժնեմասերը կարող են գրավադրվել միայն «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության կամ միայն «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին, կամ՝ բաժնեմասերի մի մասը «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության և մյուս մասը՝ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին, կամ՝ նույն բաժնեմասերը մի բանկի օգտին՝ որպես սկզբնական գրավ, և մյուս բանկի օգտին՝ որպես հաջորդող գրավ: Այս կապակցությամբ Ընկերությունը խնդրել է «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի սեփականության իրավունքը Ընկերությանը փոխանցելու գործարքի իրականացման նպատակով համաձայնություն տալ Ընկերության բաժնեմասերը «Արդշինբանկ» և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների օգտին գրավադրելուն,

զ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի №01/11.1/4855-2020 գրությունը, որով նախարարությունը չի առարկում «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի սեփականության իրավունքը Ընկերությանը փոխանցելու գործարքի իրականացման նպատակով Ընկերության բաժնեմասերը «Արդշինբանկ» և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների օգտին գրավադրելուն, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնեմասերը «Արդշինբանկ» և(կամ) «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների օգտին գրավադրելուն:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:

3. Ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
9 սեպտեմբերի 2020թ.